ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«27» 12 2024 թ. N 02/12-Ի/85633-2024

«ՌԵՆԵՍԱՆՍ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ Ա. ԴԱՎԹՅԱՆԻՆ

Գեղարքունիքի մարզ, գ. Ծովինար, 3 թղմ, փ. 7, տուն 13
annadavtyan366@gmail.com

Ծանուցում

Հարգելի՛ տիկին Դավթյան,

Միասնական սոցիալական ծառայության և «Ռենեսանս Քոնսալթինգ» ՍՊ ընկերության միջև 05.11.2024 կնքված թիվ ՄՍԾ ԳՀԱՇՁԲ-24/4 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) և Պայմանագրի անբաժանելի մաս կազմող համաձայնագրերի շրջանակներում «Ռենեսանս Քոնսալթինգ» ՍՊ ընկերության կողմից պետք է իրականացվեր 3000000 (երեք միլիոն) պայմանագրային գնով Ծառայության ք. Երևան, Նալբանդյան 13 հասցեում տեղակայված տարածքի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ:

«Ռենեսանս Քոնսալթինգ» ՍՊ ընկերության կողմից Պայմանագրի ծավալաթերթ-նախահաշվի 1-ին, 4-րդ, 5-րդ և 12-րդ կետերով նախատեսված աշխատանքները կատարվել են մասնակի, իսկ 7-րդ, 9-րդ, 13-րդ և 16-րդ կետերով նախատեսված աշխատանքները չեն կատարվել՝ ընդհանուր՝ 1629219 դրամ արժողությամբ:

Սույն թվականի դեկտեմբերի 24-ին Կապալառուն ներկայացրել է կատարողական ակտ՝ ընդհանուր 1370781 (մեկ միլիոն երեք հարյուր յոթանասուն հազար յոթ հարյուր ութսունմեկ) դրամի չափով:

Ղեկավարվելով Պայմանագրի 3.1.4 կետով՝ Միասնական սոցիալական ծառայությունը 2024 թվականի դեկտեմբերի 27-ին միակողմանի լուծել է Միասնական սոցիալական ծառայության և «Ռենեսանս Քոնսալթինգ» ՍՊ ընկերության միջև 05.11.2024 կնքված թիվ ՄՍԾ ԳՀԱՇՁԲ-24/4 գնման պայմանագիրը:

Invalid signature

X

ԱԳՆԵՍԱ ԱՂԱԲԱԲՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Signed by: AGHABABYAN AGNESA 8004770010 **Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ**

Կատարող՝ Իրավական ապահովման բաժին
հեռ. (060) 654-031

Երևան 0010, Նալբանդյան 13, հեռ.՝ (374 10) 52 45 74
info@ssa.am , www.ssa.am